

Նմանօրինակ վիճակի կան, բայց յաղթականք տակաւ պիտի սկըսին իրարութեածայնիլ . իւրաքանչիւր կողմն առաջուան պէս պիտի ջանայ բնականաբար տարածել իր ուժը և հեղինակութիւնը գաղղիոյ մէջ . և իւրաքանչիւր կողմնակցութիւն պիտի նախանձի և հակառակի իւր նախանձընդդէմ կողման ունեցած առաւելութեանը վրայ : Պուրպոնեանք և Օռլէանեանք պիտի նիւթեն և գործեն ընդդէմ Պոնաբարդեանց, և Պոնաբարդեանք ալ փոխադաբար ընդդէմ անոնց : Երեք յաղթականներն իրարութրայ կասկածանօք պիտի նային, և իմանան պիտի թէ ըրած յաղթութիւննին վնասակար եղաւ իրենց քան թէ օդտակար :

Ըսածնիս երևակայական գուշակութիւնը չեն . արդէն քիչ շատ հիմակուրնէ փորձով ալ ստուգուեցան : Պոնաբարդեանք զօրացան այնքան մինչև արգելուլ Օտիֆրէ Բասքիէի ընտրութիւնը, որ կայսրութեան դէմ ատենաբանութիւն մ'ըրեր էր դատապարտելով անոր բռնած ընթացքը : Բայց Պոնաբարդեանք չշատացան այսու յաղթութեամբ, և ոչ զՊ . Մայն ելումտից Պաշտօնեայ անուանելով, այլ կ'ուզենուրիշ Պոնաբարդեան մ'ալ քաղաքային ոստիկանութեան ընդհանուր Նախագահ անուանել :

Ուրիշ կողմանէ Պուրպոնեանք ալ ուղելով իրենց կողմը զօրացնել, փութացան Շամպոր կոմսը գաղղիա հրաւիրել . բայց Մաք Մահոն այս գործոց վնասակարութիւնն տեսնելով՝ ըստ յայտնապէս Պուրպոնեանց, որ եթէ իրենք գաղղիա բերել տան Շամպոր կոմսը, ինքն ալ զեւգինիա՝ Նարուէոն գին այրին բերել կու տայ :

Եթէ այս տարածայնութիւններն զօրանալու ըլլան, շատ կը դժուարանայ Մաք Մահոնի գործը : Թիէրի երկու տարուան նախագահութեան ժամանակ գլխաւոր ջանքն եղաւ 'ի հաւասարութեան պահել զՄիապետականս և զՀանրապետականս : Իսկ հիմա Մաք Մահոնի ջանքն պիտի ըլլայ 'ի հաւա-

սարութեան պահել երեք միապետական կողմնակցութիւններն . ուստի այս պարագայիս մէջ շատ աւելի դժուարին է Մաք Մահոնի գործը, ինչպէս և ինքն թիէր խոստովանեցաւ առթի մը մէջ :

Բայց Մաք Մահոնի միակ ապաստանարանը և յոյսը բանակն է, և անով կը յուսայ միայն պահել 'ի խաղաղութեան զԳաղղիա : Իւրաքանչիւր կողմնակցութիւնք աղէկ կ'ըմբռնեն որ անխոհեմ գործողութիւն մը կրնայ իրենց մահացու ըլլալ . և թէ հիմա Հանրապետութեան նախագահը բանակին սիրելի զօրապետն ըլլալով՝ շատ վտանգաւոր է կիրքերը գրգռելը և խռովութիւն մը յարուցանելը : Եւ ամեննեին տարակոյս չկայ որ Մաք Մահոն պէտք եղած ժամանակ պիտի գործածէ բանակին առ ինքն ունեցած սէրը : Արդէն առ բանակն ըրած մէկ յայտարարութեանը մէջ աւելի ևս զօրացուց զինուրաց իրեն վրայ ունեցած սէրը . ցուցընելով թէ ինչպէս մեծ պատիւ է բանակին Ազգային ժողովոյն այսպիսի մեծ պատուով իրենց զօրապետը պատուելը : Եւ իրենց առ Մաք Մահոն ըրած մեծ ծափահարութիւններն կը ցուցընեն թէ ինչպէս կը զգան իրենց զօրապետին եղած մեծ պատիւն, և թէ պատրաստ են պէտք եղած ժամանակ հաւատարմութեամբ ծառայել իրենց զօրապետին և նպաստամատոյց ըլլալ գաղղիոյ խաղաղութեանը և երջանկութեանը :

ՆԱԽԱԳԱՀՔ ԱԻՍՏՐԻՈ-ՀՈՒՆԴԱՐԱԿԱՆ ՊԱՇՏՈՆԱՐԱՆԻՆ

Եթէ այս օրուան օրս Հունգարիոյ այն համբաւաւոր դիւցազուններն որ հայրեննեաց սիրոյն ողջակէզ եղած զոհեցին իրենց կեանքը ահաւոր կախաղանաց վրայ, յառնէին 'ի կեանս, թօթափելով և քակելով այն քստմնելի կապն, որով պնդեցան կախաղանաց վրայ իրենց վիզերն, և տեսնային Հունգարիոյ

Պետութեան վերահաստատութիւնն ի-
րեն առաջին կարգերովն, ազգային ժո-
ղովովն, օրէնքներովն և պաշտօնեանե-
րովն, և մինչև իսկ 1848 տարւոյն Սահ-
մանադրութեան վերանորոգութեամբն,
որոյ վերայ խօսիլն և զայն արդարացի
պահանջում ընելն՝ ամենայն Հունգա-
րացւոյ մահացու յանցանք մը համա-
րուած էր, եթէ կ'ըսեմ կարենային տես-
նել այն դիւցազունքն այս ամեն բանն,
անշուշտ զարմանալով մը պիտի հար-
ցընէին ինքնիրենց՝ թէ արդեօք յառաջ
քան այս փառաց արեգակը ծագելու
քանի անգամ աղէտից արեգակն ծա-
գեցաւ իրենց սիրելի հայրենեաց վե-
րայ:

Այն դիւցազուններն իրրեւ արձան
անմոռանալի կանգնեալ 'ի մէջ պատ-
մութեան, դարուց 'ի դարս իրենց օրի-
նակաւն պիտի ուսուցանեն աշխարհի,
թէ որչափ անգութ և անողորմ կոտո-
րածիւ ողողեցաւ Հունգարիա, և թէ
որքան ծանրագին գնեց այն ազատու-
թիւնն որով կը պարծի այսօր:

Ժողովրդեան մը մէջ երբ կը զարթ-
նու ազգայնութեան հոգին և ազատու-
թեան ու անկախութեան սէրը, կանուխ
կամ անագան, բազում կամսակաւ ա-
րեան հեղմամբ, պէտք է որ նոյն ազա-
տութիւնը ձեռք բերէ: կը պատերազ-
մի մտօք, ձեռամբ, զինուք և արեամբ,
կ'ընկճի և կ'ողորմելանայ, բայց կը
գտնայ վերջապէս իրեն փրկիչն և ա-
զատիչն:

Հունգարիա ունեցաւ իրեն կտրիճ
նահատակներն, որոնք արեամբ չափ ի-
րենց հայրենեաց ազատութեան և բար-
օրութեան համար վաստակեցան, ո-
րոց մէջ կը լուսայ դասակարգիլ և Յու-
լիոս Անտրաշի կոմսը, որ թէպէտ ոչ
զինուք և արեամբ՝ այլ մտօք շատ աշխա-
տեցաւ և կ'աշխատի նոյն վախճանին
հասնելու համար:

Անտրաշի կոմսը ծնաւ յամին 1823
երեսլի և ճոխընտանեացմէ, որուն ծա-
գումը 'ի վեր կ'ելլայ մինչև յութերորդ
դար: իր հայրը կարոլոս Անտրաշի այն
գլխաւոր անձիքներէն էր, որ ընդդի-

մացան երկար ժամանակ Աւստրիոյ ջա-
նիցը, որ կ'ուզէր բառնալ Հուգարիոյ
Պետութեան հին ստհմանադրութիւնը:
Բաց ասկէց, մատենագրական գրիչ և
մեծ յարում ունէր գեղարուեստից և
առաւելապէս երաժշտութեան և նկար-
չութեան, և Հունգարիոյ գիտութեանց
ձեմարանին երեսլի անդամներէն մէկն
էր:

Իսկ Յուլիոս Անտրաշի իր որդին ման-
կական հասակէն ինքն զինքն քաղա-
քագիտական ուսման տուաւ: Դեռ հա-
զիւ քսան և չորս տարուան էր, Զեմին
քաղաքը զինքը իրրեւ իրեն ներկայացու-
ցիչ ընտրեց Նուիրակաց ժողովոյն մէջ,
ուր իր նուիրակի պաշտօնիւն, գործա-
կից եղաւ 1848 աարւոյն Սահմանա-
դրութեան յօրինմանը: Ետքը քիչ ժա-
մանակէն գեսպան զրկուեցաւ 'ի կոս-
տանդնուալիս, ուր կրցաւ իր փախրս-
տական հայրենակցացը՝ որ ամեն կող-
մանէ կը հալածուէին, մարդասիրական
ապաստանարան մը հայթայթել: Բայց
իրեն այս ատեններս կոստանդնուալիս
գտնուիլն ոչ միայն իր հայրենակցաց,
այլ նոյն իսկ իր անձին օգտակար ե-
ղաւ, ինչու որ աւստրիացի զօրավար-
ներէ կազմեալ պատերազմական ժողո-
վը, այլոց հետ զինքն ալ 'ի մահ դա-
տապարտեց իրրեւ ապստամբիչ և խոռվ-
արար ժողովրդեան, և իրեն դէմքն ալ
կախեցին կախաղանին վրայէն, որ ար-
դէն ներկեալ էր այնքան դիւցազանց
արեամբ: Բայց Օսմանեան Պետութիւնը
մերժեց Աւստրիոյ վատ խնդիրքը, որ
կ'ուզէր որ իրեն յանձնուի հայրենեաց
ազատութեան սիրով բորբոքեալ այն
ազնուական և աստ անդ ցրուած դիւց-
ազունքը, որպէս զի անոնց կեանքն ալ
վերցուներով, ապահովէ իւր Պետու-
թիւնը: Եւ յայսմ մասին Օսմանեան
Պետութիւնը մեծ գովութեան արժա-
նի է, վասն զի տեսնելով Անտրաշի
կոմսին մեծ հանճարը, և գուշակելով
թերեւ իր հայրենեաց ընելիք մեծա-
մեծ օգուտներն՝ ազատեց զինքը 'ի մա-
հուանէ:

Սակայն Անտրաշի կոմսը փախստա-

կանաց կեանքը ապահովելէն ետքը, իր կենաց աւելի ապահովութեանը համար Լոնտրա գնաց, ուր կեցաւ երկար ատեն. բայց գործերն կարգի դրուելէն ետքը դարձաւ նորէն՝ ի հայրենիս իւր յամին 1856: 1860ին դարձեալ Զեմլինի նուիրակութեան պաշտօնն յանձն առաւ, և յամին 1866 Աւագաժողովոյն մէջ փոխանորդ նախագահի անուանեցաւ Նուիրակաց ժողովոյն, ուր յայտնեց թէ պատրաստ է պաշտապանելու աւստրիական միապետութիւնը, միայն այս երկու պայմաններով. Ա. Անթերի պահպանութիւն 1848 ամին սահմանադրութիւն՝ նոյնպէս և կայսրութեան միւս մասերը կազմող երկիրներու: Եւ իր այս առաջարկութեամբն կը գրգրուէր ոչ միայն Հռւնգարիոյ անկախութեան, այլ և Աւստրիոյ սահմանադրական դատը:

Բայց վերջապէս յամին 1868 յետ երկար ժամանակաց խռովութեանց և շփոթութեանց ստիպուեցաւ կայսրը հրավարտակաւ մը վերանորոգել 1848 ամին սահմանադրութիւնը և հաստատել Հռւնգարիոյ համար առանձին պաշտօնարան մը: Այսպէս ընելով կատարեց՝ թէպէտ ոչ ամբողջապէս՝ այլ գէթ ըստ մասին Հռւնգարացի ժողովրդեան կամքը, որով և դադրեցաւ վրդովմունքն և վերցաւ յուղմանց առիթն:

Պայսդ երբոր հրաժարեցաւ պաշտօնէն և գնաց գեսպանն՝ ի Լոնտրա, յամին 1871 նոյեմբերի 14ին՝ կայսերական հրամանաւ Անտրաշի կոմսը անցաւ իրեն տեղը, և անուանեցաւ Պաշտօնեայ արտաքին գործոց. և մի և նոյն ժամանակ Ասորիոս Ավելքապէրկ եղաւ նախագահ չիսլէիդեան պաշտօնարանին, և՝ ի




Բէշդ՝ կոմնն Լոնիայ անուանեցաւ
առաջին պաշտօնեայ Հունգարա-
կան Պետական:

Իշխանն Առաջին Ավելապէրկ
ծնաւ յամին 1821 յուլիսի 21.
Երբոր օրէնսդիտութեան աւսումը
աւարտեց, զինուորական պաշ-
տամնն մէջ մտաւ, և իր յաջո-
ղութեամբն յառաջելով մէկէն,
թնդանօթաձիգ զօրաց հարիւ-
րապետ եղաւ, և քիչ ատենէն
հազարապետ. բայց ինքը չուզե-
լով շարունակել զինուորական
կեանքն, հրաժարեցաւ:

Իր բուն գործունեայ քաղաքա-
գիտական կեանքը 1867 ին սկը-
սաւ, երբ նուիրակ ընտրուեցաւ
Պոհեմիոյ Աւագաժողովոյն: Բայց
քանի մ'ամիս ետքը, կայսրը
զինքը Ֆէլտ—Մարաջախտ ա-
նուանեց Պոհեմիոյ. և նոյն պաշ-
տօնիւն առիթ ունեցաւ երեք
տարի Պոհեմիոյ Աւագաժողովոյն
խնդիրներն կարգի դնելու: Հիմա
Ավելապէրկի պաշտօնն է պաշտ-
պանել արութեամբ և խոհեմու-
թեամբ Աւստրիոյ ազատական
կարգադրութիւնքն ընդդէմ ա-
մենայն հակառակութեանց և
ընդդիմութեանց:

Իսկ կոմնն Մէլքիորէ Լոնիայ
ծնաւ յամին 1822, փետրուարի
6, և 1839 ին, տասնեւօմն տա-
րուան, օրէնսդիտութեան դափ-
նեպսակաւ պսակեցաւ: Իսկ յա-
մին 1843 դեռ քսանամեայ հա-
սակին մէջ, իր կարգէ դուրս
ճարտարիսութեան հանճարոյն
շնորհիւր, նուիրակ ընտրուեցաւ
Հունգարիոյ խորհրդարանին, և
փայլեցաւ մէկէն իր եռանդուն և
զօրաւոր ատենախսութիւննե-
րովն: 26 տարուան էր երբ ատե-
նագպիր ընտրուեցաւ ելումոից
Պաշտօնաբանին:

Այս ատեններս պատերազմ
կը յուզէր ընդդէմ Աւստրիոյ,
բայց Հունգարիոյ գործոց անյա-



ջող ելքը, և վերջապէս պարտութիւնը, ստիպեցին զլոնիայ ուրիշ երեսելի անձանց պէս առ ժամանակ մի հեռանալ 'ի հայրենեաց: Ինքը այլևայլ գիրքեր շարագրեց մատակարարութեան և քաղաքական տնտեսութեան վրայ: Յամին 1850 իր հայրենիքը դառնալով, իսկը բան առանձնացեալ կենաց տուաւ ինք զինքն պարապելով իր ուսմանցը. ապա մեծաւ գործունէութե ձեռք զարկաւ ապահովագրութեան ընկերութիւններ հաստատելու, երկաթուղիներ շինելու, և բարեկարգութիւն մնոցնելու յարգունիս գրաւեալ ընչից մատակարարութեան մէջ: Լոնիայ իր նուիրակի պաշտօնիւն շատ ջանաց բարւոքելու ելումտից վիճակը, մինչև պաշտօնեայ և անուանեցաւ ելումտից. բայց ներկայապէս նախագահ է Հունգարիոյ պաշտօնարանին:

ԵՌԱՄՍԵԱՑ ՕՐԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՐԵՒԵԼԻ ԴԻՊՈՒԱԾՈՅ

ՄԱՐՏ 16. — Ոսսունայ դուքսը յանձն կ'առնու սպանիական մասնաժողովոյն նախագահ ըլլալ 'ի Վիեննա: — Կը լսուի թէ Խառնազգայնոց ջոլիր մը կայ 'ի Քաղալոնիա:

— 17. — Մեծ միղինկ խռանտացւոց 'ի Հայտ Բարք, Ֆէնիան բանտարկելոց ազատութեանն համար: — Ումիւզա երիցս ծափահարուելով Գերմանիոյ հետ եղած դաշնադրութեան աւարտիլը կը ծանուցանէ:

— 18. — Անգղիական լրագիրք կը գովեն զթիէր արտահանութիւնը դաշնադրելուն համար: — Ի Պեոլին նուիրակաց Դահմալը կը հաւանի եկեղեցական պատժոց: — Ռաբ փոխանորդը կ'ելլէ 'ի Սդրազպուրկէ: — Պէռնայի մարզական վարչութիւնը կ'առաջարկէ գահընկէց ընել քաղաքական իշխանութենէ ապստամբող 27 ծխատէրներ: — Գաղղիական ժողովարանը կը հաւանի իտուսիոյ հետ թղթատարութեան համար խորհրդակցիլ:

— 19. — Ամսդա Փրուզ կարոլոսեան աւագերէցը 'ի Վէրա երկու անձինք Հրացան հարուածով սպաննել կու տայ:

— 20. — Արմատական երեսփոխանն Սալմէրոն Քորդէսի նախագահ կ'անուանի: — Իկնաղիէֆ 'ի կ. Պօլիս կը ստորագրէ այն պաշտօնագրոյն՝ որով իրաւունք կը չնորհուի Ռուսաց հաստատուն կալուած ստանալու 'ի Տաճկաստան:

— 21. — Գաղղիական հրովարտակ մը կ'արգելու դէպ 'ի Սպանիա զէնք դրկելը:

— 22. — Գաղղիական երկրէն Գերմանական զօրաց պարապուելուն համար եղած դաշնադրութեան պայմանները երկու կողմանէ փոփոխակի կը ճշդուին:

— 23. — Ռուսք ընդդէմ Խիվայի արշաւելու պատրաստութիւննին կը լմընցընեն, և զօրագունդք ճամբայ կ'ելլեն:

— 24. — Կարոլոսեան ջոլիրք Վէրիտա և Վէրոնա նահանգաց մէջ քաղաքային շինութեան և յառաջադիմութեան վերաբերեալ պաշտօնակալաց դիւանները կ'այրեն, և Հրացան հարուածովք գերիները կը սպաննեն:

— 25. — Բրուսիական վարչութիւնը քաղաքական օրինաց հակառակող քանի մը եկեղեցականներ կը պատուհասէ: — Բարիզու ոստիկանութիւնը գաղտնի ընկերութեան մը վերաբերեալ 42 անձինք կը բռնէ: — Հարցումն Եղ. Օրպանի Պելճիոյ ժողովարանին մէջ պելճիական պաշտօնակալին ինչպէս ընդունուելուն համար 'ի Վատիկան:

— 26. — Կոյոս ռուս օրագիրը կը պնդէ թէ պէտք է զխիվա բովանդակապէս նուաճել: — Ի կ. Պօլիս Խտալիոյ պաշտօնակալը կը ստորագրէ այն պաշտօնագրոյն որով իրաւունք կը չնորհուի օտարաց ՚ի Տաճկաստան հաստատուն կալուած ստանալու: — Մոյ երեսփոխանը Վէրսայի ժողովարանին կը ներկայացընէ Վէրսայի քաղաքական կարգաւորութեանց պաշտաման վերաբերեալ տեղեկութիւնը:

— 27. — Պէռնսդորֆ կոմսը կը մեռնի: — Կը լսուի թէ Տոն Վարլոս հրաժարեր է, որդւոյն անցընելով ժառանգութեան իրաւունքը: — Աւազք Ախէզի ջրանցքին մէջ կ'արգելուն ինտիա խտալական շոգենաւուն ընթացքը:

— 28. — Կարոլոսեանք քարանաւթ կը գործածեն ընդդէմ դրանց և պատուհանից եկեղեցւոյն Ա. Խւտալտեսոյ 'ի Ռիբոլի: Տոն Ալփիոնսոս 'ի Ռիբոլի կը մտնէ: — Մօնիղէօր գաղղիական օրագիրը կը հաստատէ Ոլոզակայի հրաժարումն իրրե սպանիական դեսպան 'ի Բարիզ: — Ի Մալակառամկավարական հաւանընկեր հասարակապետութիւն կը հրատարակուի:

— 29. — Ի Մարսիլիա կազկէ տիւ Միտի